ՄԻՐԶԱ ՄԱԼՔՈՄ ԽԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հ. Լ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

Իրանում XIX դ. տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունների շնորհիվ ծագում և ձևավորվում է բուրժուական դասակարգը, որն ստեղծում է իր գաղափարախոսությունը։ Այդ նոր գաղափարախոսության նշանավոր ներկայացուցիչներից մեկն էր Միրզա Մալքոմ խանը։

Որպես բուրժուական գաղափարախոս, Մալքոմ խանը հանդես է գալիս երկրի սոցիալ-քաղաքական կառուցվածքի այն կողմերի անհաշտ քննադատությամբ, որոնք արգելակում էին արտադրողական ուժերի զարգացումը և խոչընդոտում արտադրական նոր հարաբերությունների առաջընթացին։

Անգլիացի արևելագետ Էդվարդ Բրաունը, անդրադառնալով Մալքոմ խանի քաղաքական գործունեությանը, «Իրանի գրականության պատմություն» աշխատության մեջ գրում է. «Քաղաքական տեսակետից նրա ստեղծագործությունները սկզբնաղբյուր են Իրանի հեղափոխականների և վերափոխման կողմնակիցների ու զարթոնքի կազմակերպիչների համար»[1]։

Անխնա կերպով քննադատելով Իրանում տիրող ֆեոդալական հետամնաց կարգերը, Մալքոմ խանն առաջ էր քաշում սահմանադրության հաստատման, գիտության վերելքի, երկրում բուրժուական հարաբերությունների զարգացման համար անհրաժեշտ մի շարք տնտեսական ու հասարակական-քաղաքական բարեփոխումներ անցկացնելու պահանջ։

Մալքոմ խանի կենսագիր, ժամանակակից պատմաբան Իսմայիլ Ռայինը բնորոշելով նրա տեղը Իրանի հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ, գրում է. «Վերջին հարյուրամյակում Իրանի քաղաքական գործիչների շարքում Մալքոմ խանը եթե ոչ ամենահռչակավորը, ապա, անկասկած, ամենափառաբանվածն է»[2]։

Միրզա Մալքոմ խանը (Հովսեփ Հակոբի Մելքումյան) ծնվել է 1833 թ. Նոր Ջուղայում։ Նրա հայրը՝ Միրզա Յաղուբը (Հակոբ Մելքումյան), տարբեր երկրներում ճամփորդած, դրանց ժողովուրդների ապրելակերպին և կենցաղին ծանոթ, օտար լեզուների (ֆրանսերեն, ռուսերեն) գիտակ անձնավորություն էր։ Նա Իրանում ռուսական հյուպատոսարանի թարգմանիչն էր, միաժամանակ հրավիրված էր արքունիք՝ որպես արքայազն Զել էս-Սուլթանի ֆրանսերեն լեզվի ուսուցիչ։

---

[1] ادوارد براون، تاریخ مطبوعات ایران، تهران، ۱۹۵۸، ص ۱٤۷

[2] اسماعیل رائین، میرزا ملکم خان، زندگی و کوششهای سیاسی او، تهران، ۱۳۵۰، ص ۲

Նա իր տասը տարեկան որդուն ուղարկում է Փարիզ՝ հայկական «Ռաֆայելյան» վարժարանում սովորելու[3]։ Փարիզում Մալքոմը ավարտում է նաև պոլիտեխնիկական բարձրագույն դպրոցը, ուր բնական ու քաղաքական դիտություններից զատ ուսումնասիրում է նաև ինժեներական գործը։

1850 թ. Մալքոմը վերադառնում է Իրան և աշխատում որպես պետական թարգմանիչ, իսկ մեկ տարի անց, երբ բացվում է «Դար օլ-ֆոնուն» ուսումնական հաստատությունը, այստեղ վարում է եվրոպացի ուսուցիչների թարգմանչի պաշտոն։ Ամին էդ-Դովլեի գործուղման փաստաթղթերի № 1155 ժողովածուի նյութերը վկայում են, որ Մալքոմ խանը, նշված աշխատանքից և արտաքին գործերի մինիստրության թարգմանչի պարտականությունից բացի, ավելի ուշ վարել է շահի հատուկ թարգմանչի պաշտոնը և արժանացել մեծ վեզիր Միրզա Աղա-խան Նուրիի ուշադրությանը[4]։

1856 թ. Մալքոմ խանը որպես թարգմանիչ ուղեկցում է Ամին էդ-Դովլե Ֆարոխ խանին Ֆրանսիա, որտեղ մասնակցում է Հերաթի վերաբերյալ Անգլիայի և Իրանի միջև տարվող բանակցություններին և պայմանագրի կնքմանը։ 1858 թ. վերադառնալով Իրան նա հիմնադրում է հեռագրական գործը։

Հենց այդ տարիներին է վերաբերում Մալքոմ խանի գաղափարական-լուսավորական գործունեության սկիզբը։ Իր առաջին՝ «Քեթաբչեյե ղեյբի» («Երկնային գրքույկ») աշխատության մեջ արդեն Մալքոմ խանը առաջ է քաշում շահի միահեծան իրավունքների սահմանափակման, պետական ապարատի մեջ որոշ փոփոխություններ մտցնելու ծրագրեր։ Նա առաջարկում է ստեղծել վեց վեզիրներից կազմված պետական խորհուրդ, որը միապետի անմիջական հսկողությամբ և ղեկավարությամբ պետք է կառավարեր երկիրը։ Թեև Մալքոմ խանի ծրագիրը ընդունվում է շահի կողմից, բայց հանդիպում է հետադիմական պալատականների և պահպանողական խավերի կատաղի դիմադրությանը։ «Ճառամյալ վեզիրները և պալատական ղեկավարները,— գրում է իրանցի պատմաբան Մոհիթ Թաբաթաբային,— որոնց անձնական և տոհմական շահերի համար ձեռնտու էր տիրող վիճակի պահպանումը, թագավորի ու կառավարության թուլությունն ու բարոյական քայքայումը, բոլոր հնարավոր միջոցներով՝ նամակներով և միջնորդություններով, շահին համոզեցին հրաժարվել այդ որոշումից... նրանք ջանացին շահին համոզել, որ Մալքոմը օտարների ձեռքին գործիք է, պետության դավաճան և չարակամ»[5]։

Սակայն այս բարեփոխչական ծրագրի ձախողումը չհուսահատեցրեց Մալքոմ խանին։ Նա շարունակում է լուսավորական-հասարակական գործունեությունը իր հիմնադրած «Ֆարամուշխանե» կազմակերպության միջոցով, որը նշանակալից դեր խաղաց երկրի հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում։

---

[3] عباسعلی صالحی، شرح حال چهار نفر از مسیحیان ایرانی، تهران، ص ۹

[4] اسماعیل رائین، میرزا ملکم خان، تهران ۱۳۵۰، ص ۹

[5] مجموعه آثار میرزا ملکم خان، تدوین و تنظیم محمد محیط طبا طبائی، قسمت اول نظم جدید، تهران، ۱۳۲۷، ص ه۰

Որոշ ռեակցիոն պատմաբաններ քննադատել և ձգտել են նսեմացնել այս կազմակերպության նշանակությունը, բայց այնուամենայնիվ նրանց չի հաջողվել ժխտել այն ազդեցությունը, որ Մալքոմ խանի գաղափարներն ունեցել են Իրանի 1905—1911 թթ. բուրժուական հեղափոխությունը նախապատրաստելու գործում։ Նրանցից ոմանք «Ֆարամուշխանեն» բնութագրել են որպես «իսկական ֆրանկմասոնական», իսկ ոմանք էլ՝ մասոնական տիպի մի կազմակերպություն։ Ի հակադրություն այդ տեսակետի պարսիկ պատմաբան Իսմայիլ Ռայինը նշում է, որ նման գաղտնի կազմակերպությունները ոչ մի առնչություն չունեն ֆրանկմասոնական ընկերությունների հետ։ Նա ավելացնում է նաև, որ մինչև օրս էլ, երբ «Ֆարամուշխանեի» հիմնադրումից անցել է ավելի քան հարյուր տարի, չի գտնվել որևէ վավերագիր, որը կարողանար հաստատել «Ֆարամուշխանեի» կապը համաշխարհային ֆրանկմասոնության հետ[6]։

Այս ճիշտ գնահատականը իր արտացոլումն է գտել նաև մի շարք այլ հեղինակների գործերում[7]։

Սակայն ինչպես արդեն նշեցինք, որոշ հեղինակներ այն կարծիքին են, թե «Ֆարամուշխանեն» հանդիսացել է մասոնական բնույթի մի կազմակերպություն։ Օրինակ, Մոհամեդ բեկ Շախթախթինսկին անդրադառնալով «Ֆարամուշխանեի» ստեղծմանը և գործունեությանը, գրել է. «Մելքում խանը Թեհրանում հաստատեց առաջին որմնադրական (մասոնական) ընկերությունը, որտեղ երիտասարդ պարսիկները խոսում էին Եվրոպական քաղաքակրթության ներմուծելու անհրաժեշտության մասին և վիճաբանում էին Ղուրանի կետերի մասին ի նպաստ Պարսկաստանում քաղաքակրթությունը տարածելու»[8]։

Իրանում ֆրանկմասոնական առաջին կազմակերպությունը կոչվել է «Ազատության լոժա», որը ստեղծվել է 1906 թ. ապրիլի 12-ին։ Դա ֆրանսիական ֆրանկմասոնական կազմակերպության մի ճյուղն էր և ոչ մի առնչություն չուներ Մալքոմի «Ֆարամուշխանեի», ինչպես նաև նրա հետևորդների կողմից ստեղծված «Մարդկայնության միություն» կազմակերպության հետ[9]։

«Ֆարամուշխանեի» հիմնադիրները եղել են Միրզա Յաղուբը և Միրզա Մալքոմ խանը՝ հայր և որդի, որոնք արքունական շրջաններում մեծ ազդեցություն ունեին։ Որպեսզի ժամանակի իշխող շրջանների ազատամիտ անձինք առանց վախի և կասկածի ներգրավվեին այդ միության շարքերը, Մալքոմ խանը Ֆաթհ Ալի շահի կրտսեր որդուն՝ Ջալալ էդ-Դին Միրզային ձևականորեն նշանակել էր կազմակերպության նախագահ։ Ջալալ էդ-Դին Միրզա արքա-

---

[6] اسماعیل رائین، میرزا ملکم خان، تهران، ۱۳۵۰، ص ۱۳—۱٤

[7] Տե՛ս ناظم الا سلام کرمانی، تاریخ بیداری ایرانیان یا تاریخ مشروح و حقیقی مشر و طیت ایران، مجلد اول، تهران، ص ۱۲۸ محمد محیط طباطبائی، مجموعة اثار میرزا ملکم خان، تهران، ۱۹٤۸، ص لة

[8] «Արաքս» պատկերազարդ հանդես, 1887, գիրք Ա, էջ 148—149։

[9] فریدون آدمیت، فکر آزادی و مقدمه نهضت مشروطیت، تهران، ص ۲۰۱

յաղնը գրող էր, զարգացած և գիտուն մի անձնավորություն։ Նա բարեկամական կապերի մեջ էր Միրզա Ֆաթալի Ախունդովի և մշտական շփման մեջ՝ ժամանակի ազատամիտ շրջանների և մտավորականների հետ։ Նա շատ կարճ ժամանակամիջոցում կարողացավ «Ֆարամուշխանեի» անդամներին իր ազդեցության տակ առնել և հռչակվել որպես նրա գաղափարական ղեկավարը[10]։

Ժամանակի մի շարք ականավոր, առաջադիմական գաղափարների տեր անձանց ընդգրկելով «Ֆարամուշխանե» կազմակերպության մեջ, Մալքոմ խանը սկսում է նրա միջոցով քաղաքակրթության գաղափարների տարածման ուղղությամբ լուրջ աշխատանք ծավալել։ Դեռ մի քանի տարի չանցած, արդեն մի խումբ պետական գործիչներ, արքայազներ, հոգևորականներ և այլ խավերի առաջադեմ ներկայացուցիչներ ներգրավվեցին այդ կազմակերպության մեջ[11]։

«Ֆարամուշխանե» կազմակերպությունը մեծապես նպաստում էր Իրանում ազատասիրական գաղափարների տարածմանը։ Այդ կազմակերպության շնորհիվ Մալքոմ խանի լուսավորական գաղափարները տարածվեցին հասարակության տարբեր խավերի մեջ և Իրանի քաղաքական շրջաններում։ Մի շարք անվանի պետական գործիչներ, այդ թվում՝ Միրզա Մոհամեդ Ալի խան Ամին-էդ-Դոլեն, Միրզա Յահյա խան Մոշիր էդ-Դոլեն, Սեփահսալարի եղբայրը և Միրզա Մոհսեն խան Մոշիր էդ-Դոլեն և ուրիշներ Մալքոմի համախոհները և մտերիմներն էին։ Ավելին, բարձրաստիճան հոգևորականներից Հաջի Միրզա Հադին, որն իր գիտելիքներով և ազատամիտ գաղափարներով առանձնանում էր շրջապատից, նույնպես Մելքոմ խանի գաղափարակիցն էր[12]։

Շահական անսահմանափակ միապետությունը և պալատականների կեղեքիչ ու սանձարձակ գործունեությունը ստիպում են անգամ այնպիսի մի դաժան մարդու, ինչպիսին էր արքայազն Զել էս-Սոլթանը, կառավարման նոր ուղիներ որոնել և դառնալ «Ֆարամուշխանե» կազմակերպության անդամ՝ իր ծրագրերի իրականացման համար հասարակական հենարան ձեռք բերելու նպատակով[13]։

Իսմայիլ Ռայինը, ցանկանալով ցույց տալ Մալքոմի և Զել էս-Սոլթանի փոխհարաբերությունը, մեջբերում է կատարում Մալքոմ խանի՝ Իրանում գրտնվող իր մտերիմներից մեկին ուղղված մի նամակից, որը պահվում է Փարիզի ազգային գրադարանի ձեռագիր վավերագրերի արխիվում. «...Նորին պայծառափայլությունը՝ Զել էս-Սոլթանը, մեր նպատակների առաջընթացի համար շատ հարմար դեմք է։ Պետք է որպես երաշխավորի նրա մոտ ուղարկել մի վստահելի անձնավորություն և համաձայնություն կայացնել։ Այնուհետև աշխատանքի կատարման ինչ ձև որ առաջարկեք, նա կկատարի...»[14]։

---

[10] اسماعیل رائین، میرزا ملکم خان، ص ۱۷

[11] Նույն տեղում, էջ 17—18։

[12] فریدون آدمیت، فکر آزادی، ص ۲۰۱—۲۰۲

[13] مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران، ۱۳۲۸، ص ۱۱۹

[14] اسماعیل رائین، میرزا ملکم خان، ص ۱۸

Այս և ուրիշ շատ փաստեր խոսում են այն մասին, որ XIX դ. վերջին Իրանում ֆեոդալական կարգերի քայքայումը այն աստիճան էր խորացել, որ երկրի իշխող շրջանների ներկայացուցիչներն անգամ մասնակից էին դառնում ֆեոդալական-նահապետական կարգերի դեմ մղվող պայքարին։

Լիբերալ գաղափարների տարածումը ահաբեկեց և զգաստացրեց Նասր էդ-Դին շահի պալատականներին։ Տագնապն ավելի խորացավ այն բանից հետո, երբ Ալեքսանդր II ցարը, Ռուսաստանի հարավային հարևան երկրում առաջավոր գաղափարների տարածումը խափանելու նպատակով, «Ֆարամուշխանեի» գոյության չորրորդ տարում մի նամակ հղեց Նասր էդ-Դին շահին, զգուշացնելով վերջինիս, որ այդ գաղտնի միությունը ուղղված է իրենց՝ Ալեքսանդր II-ի և Նասր էդ-Դինի դեմ և ծառայում է երկու երկրների շահերը միմյանց հակադրելու նպատակին[15]։

Հասկանալի է, որ շահը և նրա կառավարությունը չէին կարող հանդուրժել նման կազմակերպության գոյությունը։ Իրանի հետադիմական կառավարող շրջանները, տեսնելով Մալքոմ խանի առաջավոր, ազատամիտ գաղափարների լայն տարածումը և զգալով իրենց դիրքերի ու իշխանության խարխլման վտանգը, ամեն կերպ ջանացին ահաբեկել շահին։ Հետևանքը եղավ այն, որ 1862 թ. պալատը մի հայտարարությամբ դատապարտեց «Ֆարամուշխանեն»։ Ի լուր ամենի հայտնվում էր շահի կարգադրությունը, որ այդուհետև ֆարամուշխանե բառը արտասանող կամ նման որևէ միություն կազմակերպել փորձող ամեն ոք կենթարկվի ամենախիստ պատժի[16]։

Ջալալ էդ-Դին Միրզան տնային կալանքի ենթարկվեց, իսկ Միրզա Յաղուբ խանը՝ Մալքոմի հայրը, արտաքսվեց Կոստանդնուպոլիս։

«Ֆարամուշխանեի» արգելումով ուղղակի մեղադրանք չներկայացվեց Մալքոմ խանին։ Նա չդադարեցրեց իր գործունեությունը, ընդհակառակը, այդ շրջանում նա գրեց մի քանի աշխատություններ, որտեղ քննադատում էր երկրում տիրող իրավիճակը և պարզաբանում իր «Երկնային գրքույկում» արծարծված գաղափարները։ Պետական գործիչները կարդում էին դրանք և հաղորդում շահին։

«Ֆարամուշխանե» կազմակերպությունը արգելելուց հետո Մալքոմի համախոհները շարունակեցին տարածել նրա գաղափարները, լայն քաղաքական գործունեություն ծավալեցին ամբողջ Իրանում և ստեղծեցին «Մարդկայնության միությունը» («جامعه آدمیت»)։ Այս գաղտնի կազմակերպության հիմնադիր և ղեկավար Միրզա Աբասօղլի խան Ղազվինին Մալքոմ խանի կազմած «Մարդկայնության հիմունքները» («اصول ادمیت») աշխատությունը դարձրեց նոր կազմակերպության ծրագիրը[17]։

«Մարդկայնության միություն» կազմակերպությունն իր ճյուղերն ուներ Մազանդարանում, Գիլանում, Մալայերում, Քերմանշահում և այլ վայրերում,

---

[15] ابراهیم تیموری، عصر بی خبری یا تاریخ امتیازات در ایران، تهران، ۱۳۳۲، ص ٦٦

[16] اسماعیل رائین، میرزا ملکم خان، ص ۲۲

[17] «تهران مصور» شماره ۹۳۵، ۱۳ مرداد، ۱۳٤۰، ص ٦

որոնցում ընդգրկված էր ավելի քան երեք հարյուր հիսուն մարդ[18]։ Ուշագրավ է հետևյալ հանգամանքը. «Մարդկայնության միության» ճյուղերից մեկը հանդիսացող «Իրավունքի կազմակերպությունը» («انجمن حقوق»), որը գործում էր Քերմանշահում՝ Սոլեյման Միրզայի ղեկավարությամբ, իր անդամության տոմսերը տպագրել էր այն տառերով, որ Միրզա Մալքոմ խանը ստեղծել էր պարսկերենի այբուբենը բարեփոխելու նպատակով[19]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Մալքոմ խանի գործի շարունակողները Իրանի բուրժուական հեղափոխության նախապատրաստման տեսակետից մեծ աշխատանք են կատարել։ Նրանց միությունը միակ լուրջ կազմակերպությունն էր, որ ունենալով պայքարի հաստատուն ծրագիր, կազմակերպված մարտնչել է միապետական դաժան իշխանության դեմ՝ հանուն երկրում սահմանադրական կարգերի հաստատման։

Չնայած Մալքոմ խանը բացահայտորեն չէր խոսում հանրապետության ստեղծման մասին, բայց իր աշխատություններում և հոդվածներում անուղղակիորեն ամեն կերպ աշխատում էր բացատրել և պարզաբանել հանրապետական կարգերի էությունը։

Պետական տարբեր կարգերի վերաբերյալ Մալքոմ խանի քաղաքական հայացքները արտացոլվել են նրա երեք աշխատություններում՝ «Կառավարման մեջլիս», «Բարեփոխումների մատյան» («دفتر تنظيمات» և «مجلس ادارہ») և «Բարեփոխումների մեջլիս» («مجلس تنظيمات»)։

1863 թ. Մալքոմ խանը աքսորվում է Բաղդադ։ Իրաքի իշխանությունները, տեղյակ լինելով Մալքոմի քաղաքական հայացքներին, մի նամակ են գրում Բաբ Ալիին և պահանջում Մալքոմին հեռացնել այնտեղից։ Բաբ Ալին իր հերթին Թուրքիայում Իրանի դեսպան Միրզա Հոսեյն խան Մոշիր օլ-Դոլեին ուղղված նամակում պահանջում է վտարել Մալքոմին։ Իսմայիլ Ռայինը մեջբերում է կատարում Մոշիր օլ-Դոլեի՝ արտաքին գործերի մինիստրությանն ուղղված նամակից (պահվում է Իրանի անձեռնմխելի վավերագրերի արխիվում), որտեղ ասված է. «Արտաքսել այս սադրիչ մարդուն», որի «...ներկայությունը արաբական Իրաքում կազմալուծման պատճառ կդառնա»[20]։

Ինչպես տեսնում ենք, Մալքոմի քաղաքական հայացքները և գործունեությունը սարսափեցնում էին ոչ միայն Իրանի շահին և պալատականներին, այլև հարևան երկրների կառավարող շրջաններին։

Բաղդադից վտարվելուց հետո Մալքոմը գնում է Կ. Պոլիս՝ Իրանի դեսպան Մոշիր օլ-Դոլեի մոտ[21]։

1863 թ. արտաքին գործերի մինիստրությանը գրած մի նամակում Մոշիր օլ-Դոլեն այն կարծիքն է հայտնել, որ «...քաղաքական ասպարեզում Մալքոմ խանից շատ ավելի օգուտ կարելի է ստանալ»[22]։ Այս բանից հետո

---

[18] Նույն տեղում։

[19] فریدون آدمیت، فکر آزادی، ص ۲۲۷

[20] اسماعیل رائین، میرزا ملکم خان، ص ۲۶—۲۸

[21] خان ملك ساسانی، سیاستگران دوره قاجار، تهران، ۱۹۲۰، ص ۱۲۸

[22] اسماعیل رائین، میرزا ملکم خان ص ۳۱

Մալքոմ խանը նշանակվում է Իրանի հյուպատոս Եգիպտոսում։ Երկու տարի Եգիպտոսում աշխատելուց հետո նա վերադառնում է Կ. Պոլիս և աշխատում այնտեղ որպես դեսպանության խորհրդական։ Այդ շրջանում Մալքոմ խանը մեծ ջանքեր է գործադրում, որպեսզի կարողանա իրագործել իր «Բարեփոխումների մեջլիս» աշխատության մեջ արծարծված գաղափարները, որոնք ըստ էության կարելի է համարել Իրանում պառլամենտ ստեղծելու առաջին նախագիծը[23]։ Սակայն այստեղ ևս պահպանողական պետական գործիչները արգելք են հանդիսանում Մալքոմ խանի առաջադրած նախագծի իրականացմանը։ Այս շրջանում Մալքոմ խանը ձեռնամուխ է լինում Իրանում ազգային բանկի ստեղծմանը, բայց որովհետև ոչ մի դրամատեր, ունևոր պետական պաշտոնյա ու պալատական գործիչ չի համաձայնվում իր կապիտալը ներդնել այդ գործում, ազգային բանկի ստեղծման նախաձեռնությունը ևս անհաջողության է մատնվում։

Մալքոմը իր մի զեկուցագրում պարզաբանում է բանկի և փոխառության կարևորությունն ու անհրաժեշտությունը երկրի ֆինանսական վիճակը կարգավորելու գործում։ Նա գտնում է, որ պետությունը պետք է Եվրոպայից անպայման հարյուր կամ երկու հարյուր քուրուր (քուրուրը=հինգ հարյուր հազարի) թուման վարկ վերցնի և այն ներդնի Իրանի բարեկարգման գործին՝ այդ գործարքը կատարելով ազգային բանկի միջոցով։ Նա իր այդ զեկուցագիրը վերջացնում է այսպես. «Լինեմ ես մեռած, թե կենդանի, իմ այս կտակը չմոռանաք։ Առանց ֆինանսական կարգավորման ոչ մի կերպ, ոչ մի գործ չեք կարողանա ձեռնարկել...»[24]։

Մալքոմ խանի՝ երկրի բարենորոգման նպատակին ուղղված այս ջանքերը ի վերջո գնահատվում են Սադր Աղամի կողմից. նրան շնորհվում է Նաղեմ օդ-Դոլե տիտղոսը և հանձնվում է առաջին կարգի շքանշան[25]։ Այդ կապակցությամբ «Մշակ» թերթում տպագրված «Նամակ Ուրմիից» հաղորդման մեջ ասվում է. «Թեհրանում Միրզա Մալքոմ խան հայազգի երիտասարդը, առաջին վեզիրի օգնականը, ստացավ Նաղմ-Դովլա տիտղոսը, որ նշանակում է բարեկարգիչ տերության։ Արդարև փայլուն տիտղոս։ Մի այնպիսի տիտղոս պատմությունը միայն շնորհում է մեծ վերանորոգիչներին։ Մենք հուսով ենք, որ հանճարեղ երիտասարդը յուր գործունեությամբ տեղիք կտա Պարսկաստանի քաղաքակրթության պատմագրությանը հավիտենական դրոշմով կընքել յուր տիտղոսի ֆերմանը»[26]։

1873 թ. Մալքոմ խանը նշանակվում է Լոնդոնում Իրանի արտակարգ դեսպան։ Նրան է հանձնարարվում Նասր էդ-Դին շահի Եվրոպա կատարելիք ճանապարհորդության նախապատրաստությունը։ 1873—1889 թթ. Մալքոմը մի շարք կարևոր գործեր է կատարել, որոնց մասին զեկուցել է արտաքին գործերի մինիստրությանը, շահին և Սադր Աղամին, ըստ որում այդ գործերի զգալի մասը հանձնարարված է եղել շահի և պետության կողմից[27]։

---

23 Նույն տեղում, էջ 32։
24 Նույն տեղում, էջ 80—81։
25 Նույն տեղում, էջ 32։
26 «Մշակ», 1872, № 28։
27 اسماعیل رائین، میرزا ملکم خان، ص ٣٤

1878 թ. Նասր էդ-Դին շահը Մալքոմ խանին նշանակում է Իրանի ներկայացուցիչ՝ Բեռլինի կոնգրեսում, որտեղ ի միջի այլոց լսվելու էր Ղոթուրի շրջանը ետ վերադարձնելու մասին Իրանի պահանջը։ 30 տարի առաջ թուրքերը այդ գավառը գրավել էին Իրանից, և նրա պատկանելության հարցը վեճի առարկա էր դարձել երկու երկրների միջև։ Մալքոմ խանի դիվանագիտական բանակցությունների և ջանքերի շնորհիվ Բեռլինի կոնգրեսում որոշում ընդունվեց Ղոթուրի գավառը (որը մտնում էր Խոյի վիլայեթի մեջ) իր 39 գյուղերով վերադարձնել Իրանին։

Բեռլինի կոնգրեսում Մալքոմն իր վրա դրված պարտականությունները կատարեց մեծ հնարամտությամբ և հմտությամբ։ Այդ ծառայության համար նա ստացավ Ջենաբե Աշրաֆ (جناب اشرف) տիտղոսը, իսկ հետագայում՝ «պրինց ռեֆորմատոր» (پرنس رفورماتور) կամ «Շահզադե Մոսլեհ» (شاهزاده مصلح) կոչումը[28]։

XIX դարի ադրբեջանական ականավոր գործիչ Միրզա Ֆաթալի Ախունդովը սերտ կապերի մեջ է եղել Միրզա Մալքոմ խանի հետ։ Նրանց առաջին հանդիպումը տեղի է ունեցել Ստամբուլում, երբ 1863 թ. մայիսի 26-ին Ա. Խունդովը Ստամբուլ էր եկել պաշտպանելու արաբական այբուբենի բարենորոգումների իր նախագիծը։ Արաբական այբուբենի վերանայման և բարեփոխման կապակցությամբ 1870 թ. հոկտեմբերի 25-ին Ախունդովը մի նամակ է գրում Մալքոմ խանին և խնդրում, որ վերջինս այդ հարցի վերաբերյալ հանդես գա հոդվածով։ Ախունդովը բարձր է գնահատել Մալքոմ խանի քաղաքական-լուսավորական հայացքները, Մալքոմ խանի կողմից կիրառված պարսկերեն նոր տառաձևերը, նրա «Վեզիրը և շեյխը» պիեսը։ Այս մասին նա 1871 թ. հունիսի 2-ին Մալքոմին ուղղված նամակում գրում է. «Եթե դուք այս գրքույկը չգրեիք, թախիծը կուտեր իմ հոգին, որովհետև ոչ ոք իմ գաղափարների ճշմարիտ իմաստը չէր հասկանա։ Այժմ ես մխիթարված եմ...»[29]։ Մալքոմի գրած մի շարք այլ պիեսներ ևս արժանացել են Ախունդովի գովասանքին և խրախուսանքին։ Ահա դրա վկայությունը. «Ստացա Ձեր սիրալիր նամակը։ Լրիվ կարդացի Ձեր աշխատությունները և Ձեզ հազար գովասանք մաղթեցի։ Ես հիացած եմ դրանով։ Ինձ հուզում է Ձեր բուռն ձգտումը, Ձեր ճաշակը և ոճը... Հուսով եմ, որ Դուք հետագայում ավելի մեծ բարձունքների կհասնեք և Ձեր հայրենակիցներին, բարեկամներին ու համախոհներին ուղեցույց կդառնաք»[30]։

Մինչ «Կանուն» («Օրենք») թերթը հրատարակելը Մալքոմ խանն իր հոդվածները տպագրում էր անգլիական թերթերում («Կանունը» ևս տպագրվում էր Լոնդոնում)։ «Կանունի» առաջին համարը լույս է տեսել 1890 թ. փետրվարի 20-ին։ Թերթը գոյատևել է մոտ երեքկես տարի, լույս է տեսել ընդամենը 42 համար։ Հատկանշական է, որ հեղափոխության տարիներին Թեհրանում վերահրատարակվեցին Մալքոմ խանի մի քանի աշխատությունները և

---

[28] محمد محیط طباطبائی، مجموعه آثار میرزا ملکم خان، تهران، ۱۹٤۸، ص ج

[29] М. Ф. Ахундов, Изб. философские произвед., Баку, 1953, էջ 305:

[30] М. Ф. Ахундов, Избранное, М., 1956, էջ 254:

«Կանուն» թերթի 23 համարները։ Մալքոմը «Կանունի» էջերում հրապարակած իր բազմաթիվ քննադատական ընդարձակ հոդվածներով պայքարում էր հանուն բուրժուական իրավակարգի բարգավաճման, անձի իրավունքի պաշտպանության, սեփականատիրության ապահովման և խոսքի ու մամուլի ազատության։ «Կանուն» թերթի նշանաբանն էր՝ «Միասնություն, առաջադիմություն և արդարադատություն»[31]։ Նա սուր քննադատության էր ենթարկում Նասր էդ-Դին շահի արքունիքը և դատապարտում երկրում տարածված օրինազանցություններն ու կամայականությունները, պաշտոնների ու աստիճանների վաճառքը, կաշառակերությունը։ Թերթի երկրորդ և իններորդ համարներում Մալքոմ խանը գրում է. «...Ջամշիդի Խագավորական պալատը վերածել են աճուրդի մեծ շուկայի՝ վաճառելով պետական պաշտոնները, շքանշանները ու կոչումները։ Նահանգներն ու գավառները, մինիստրական պաշտոնները վաճառեցին ամեն տեսակի ապիկար մարդկանց, ծախեցին գետերը, հանքերը, երկրամասերը և սահմանները, ամենացածր գնով ծախեցին ժողովրդի բոլոր իրավունքները, երկրի առևտուրն ու պետության անկախությունը և ահա հիմա, արևելյան շուկայի հնավաճառների նման, ծախում են հորինված պետական տիտղոսները, շինծու առանձնաշնորհները կամ պետական կնիքով հաստատված վավերագրերը... Բոլոր երկրամասերը անկում են ապրում։ Ժողովուրդը փախչում է երկրից։ Մեր բանակը նողկալիության գործիք է դարձել, դպրոցները վեր են ածվել ավերակների... մեր օրենքները՝ տխմարների հիմար քմահաճույքի արդյունք են։ Բարոյականությունն ընկել է... Մենք զրկվել ենք ունեցվածքից, կյանքի ապահովության համոզվածությունից։ Մեզ մոտ հնարավոր չէ ո՛չ խոսել, և ո՛չ էլ գործել։ Իրանը ամբողջությամբ մի բանտ է...»[32]։

«Կանուն» թերթի 1891 թ. № 6-ում Մալքոմ խանը մի ղազվինցի վաճառականի անունից բողոքում է այն բազմաթիվ կոնցեսիաների դեմ, որոնք Ամին էս-Սոլթանի կողմից տրվում էին օտարերկրացիներին։ «Չկա մեկը,— գրում է նա, —որ այս «աղնիվ» երիտասարդից հարցնի, թե ո՞ր օրենքով եք դուք մեր երկրի գյուղացիների իրավունքները ծախում օտար արկածախնդիրներին։ Իսլամի սուրբ օրենքի և բոլոր պետությունների օրենքների համաձայն այս միջոցները մեր երկրի ժողովրդի օրինական սեփականությունն են։ Դրանք մեր սննդի և գոյության միջոցներն ու հիմքն են։ Ինչպե՞ս եք դուք համարձակվում օտարներին վաճառել մուսուլմանների գոյամիջոցները։ Արդյոք Իրանի ժողովուրդը իսկապես մահացե՞լ է, որ դուք նրա ժառանգությունը աճուրդի եք հանել»[33]։

Երկրում օրենքներ սահմանելու և դրանք իրագործելու համար նա զգոնություն է կոչում ժողովրդին։ Հակառակ դեպքում, գրում է նա, «մենք պարտավոր կլինենք համբուրել օտար զինվորների կոշիկները»[34]։

---

[31] فریدون آدمیت، فکر آزادی، ص ۱۱۰

[32] «قانون» ۱۸۹۰، نمره ۲، ص ۳، نمره ۹، ص ۱

[33] «قانون» ۱۸۹۱، نمره ٦

[34] «قانون» ۱۸۹۱، نمره ۷

XX դարի սահմանագծին, արձագանքելով Իրանում ստեղծված հեղափոխական իրադրությանը, «Կանուն» թերթը ժողովրդին կոչ էր անում հրաժարվել հարկեր տալուց։ «Հարկերը պետք է ծախսվեն ժողովրդի իրավունքները պաշտպանելու համար... և ոչ թե տրամադրվեն նրանց, ովքեր խլում են ժողովրդի իրավունքները։ Այն երկրում, որտեղ օրենք չկա, պետությանը չպետք է հարկ տալ...»[35]։ «Անիծված լինի այն անզգա, անողնաշար ժողովուրդը, որը օրենք չունեցող պետությանը հարկ կտա»[36]։

Այսպիսով, «Կանուն» թերթի ծավալած քաղաքական գործունեությունը մեծ դեր է խաղացել Իրանի գաղափարական զարթոնքի գործում։ Սուր և անհաշտ իր քննադատությամբ խորացնելով խմորվող հակաֆեոդալական տրամադրությունները, թերթն ըստ ամենայնի հող էր նախապատրաստում Իրանում սահմանադրական շարժման սկզբնավորման համար։

Շահը Մալքոմի քննադատությունը անձամբ իրեն էր վերագրում։ Այդ էր պատճառը, որ «Կանուն» թերթի մուտքը Իրան արգելվեց։ Սակայն դա չկարողացավ կանխել թերթի տարածումը մայրաքաղաքում։ Բնորոշ է նաև, որ 1891 թ. ապրիլին մայրաքաղաքից և տարբեր նահանգներից շահի հաստեղով ստացվում են անստորագիր նամակներ և թռուցիկներ, որոնց հեղինակները բողոքում էին կառավարական արգելքի դեմ և անգամ սպառնում շահին[37]։

Ընդհանուր գծերով այսպիսին էր Մալքոմ խանի «Կանուն» թերթի դերը Իրանի հասարակության զարթոնքի, Իրանի 1905—1911 թթ. բուրժուական հեղափոխության գաղափարական նախադրյալների նախապատրաստման գործում։

Մալքոմ խանի քաղաքական-լուսավորական և հրապարակախոսական գործունեությունը վերոհիշյալով չի սահմանափակվում։ Սոցիալ-տնտեսական և քաղաքական բարենորոգումների վերաբերյալ նրա հայացքներն ու գաղափարները արտահայտված են նաև նրա բազմաթիվ այլ աշխատություններում՝ բրոշյուրներում, նամակներում, զեկուցագրերում, ինչպես նաև գեղարվեստական երկերում[38]։ Անհրաժեշտ է նշել, որ այդ հայացքներն ապրել են զգալի էվոլյուցիա։ Եթե իր քաղաքական գործունեության սկզբնական շրջանում Մալքոմ խանը երկրում բարեփոխումներ անցկացնելու համար դիմում էր երկրի իշխանություններին՝ շահին, պալատականներին և տարբեր պաշտոնյաների, ապա հետագայում նա հանձին ժողովրդի տեսնում էր այն ուժը, որն ի վիճակի էր կործանել հին կարգերը։ Այդ համոզմամբ նա ժողովրդին կոչ էր անում կործանել անսահմանափակ միապետությունը և Իրանում սահմանադրական կարգեր հաստատել։

---

[35] «قانون» ۱۸۹۱، نمره ۱۲

[36] «قانون» ۱۸۹۱، نمره ۱۸

[37] اسماعیل رائین، میرزا ملکم خان، ص ۱۱۵

[38] Մալքոմ խանի մինչ այժմ հայտնաբերված ստեղծագործությունների թիվը, բացի նամակներից ու զեկուցագրերից, հասնում է 28-ի։

ИЗ ИСТОРИИ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ МИРЗА МАЛЬКОМ-ХАНА

О. Л. ПАХЛЕВАНЯН

(Резюме)

Во второй половине XIX в. в социально-экономической жизни Ирана происходили значительные сдвиги. Формировалась национальная буржуазия, развитию которой во многом препятствовала стоящая у власти феодальная аристократия.

В статье кратко представлены жизнь и общественно-политическая деятельность иранского буржуазного идеолога и просветителя Мирза Малком-хана (Овсепа Мелкумяна). В своих трудах он резко критиковал те стороны социально-экономического строя страны, которые тормозили развитие производительных сил, препятствовали формированию новых производственных отношений. Малком-хан вел последовательную борьбу против абсолютизма, разоблачал жестокость и произвол правящих кругов страны. Он выдвигал идеи защиты личности и создания конституционной монархии.

Политическая деятельность Мальком-хана сыграла большую роль в идейной подготовке иранской революции 1905—1911 гг.